Հովհաննես Թումանյան

Երկար գիշերներ

Տանջվում եմ անքուն գիշերն անկողնում,
Տանջվում հուսահատ, վաստակած, տրկար,
Եվ մրտքերն հոգիս հանգիստ չեն թողնում,
Եվ գիշերը մո՛ւթ, գիշերը երկար:

Ա՛խ, մի ժամանակ, և դեռ նոր էր այն,
Մայրական գիրկ էր աշխարքն ինձ համար,
Հրրճվանքը սրրտիս չէր թրվում ունայն,
Ոչ գիշերն այսպես տաղտկալի, երկար:

Էհ, անցա՛վ, գնա՛ց. և՛ ցընորք, և՛ սեր,

Ե՛վ ույժ, և՛ եռանդ կորավ՝ ինչ որ կար,
Եկան սև օրեր ու ծանրը հոգսեր
Ու դարձրին այսպես գիշերը երկար:

Տանջվում եմ անքուն այժրմ անկողնում,
Եվ հուսակրտուր, հոգնած, ուժասպառ

Նայում եմ, նայո՛ւմ, դեռ չի լուսանում.
Ա՛խ, այս գիշերներն ինչքա՛ն են երկար:

1897

Յատուկ Պոեմ